ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. մայիսի 16-ին, N108-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ում՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Աղյուսակ 5-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 1-ի:

2) Աղյուսակ 6-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 2-ի:

3) Աղյուսակ 7-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 2-ում՝ «ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Մարզի ղեկավար կազմի և ՆՊՄԻ, ՇՊՄՊ գոտիներում գտնվող բնակավայրերի ազդարարման սխեման փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 4-ի:

2) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիների բնակչության իրային ապահովման միջոցների հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 5-ի:

3) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչության վահանաձև գեղձի արգելափակման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 6-ի:

4) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչության

պատսպարման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 7-ի:

5) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներից բնակչության տարհանման միջանկյալ կետերի հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 8-ի:

6) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 9-ի:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 3-ում՝ «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Երկրաշարժի ազդեցության գոտու բնակչության վերաբերյալ տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 10-ի:

2) Տուժած բնակչության և փրկարարական ուժերի սննդով ապահովման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 11-ի:

3) Տուժած բնակչությանը հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 12-ի:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 4-ում՝ «Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում ՈՒՆԹՆ օգտագործող օբյեկտների և քիմիական վարակվածության հնարավոր ծավալների վերաբերյալ տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 13-ի:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 5-ում՝ «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում մարզի ջրամբարների վերաբերյալ տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 14-ի:

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 8-ում՝ «Ձնաբքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում Արագածոտնի մարզի ավտոճանապարհները սպասարկող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 15-ի:

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 12-ում՝ «Համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում Արագածոտնի մարզի ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական

հսկողության համակարգի մարմինների մասին՝ ըստ գերատեսչական պատկանելիության, տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 16-ի:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին:

9. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 5/19/2025 16:54:46 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ